

«Լեռնագոգի քարաձուլման գործարան»
Բաց բաժնետիրական ընկերություն

Լեռնագոգի քարաձուլման գործարանի
վերակառուցման/վերազինում, պողպատե
ձուլակտորների և ամրանների արտադրության
կազմակերպում

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Պատվիրատու՝

Կատարող՝

Տնօրեն՝

Երևան - 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1.1. Ձեռնարկողի վերաբերյալ տեղեկություններ.....	4
1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	4
1.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնատեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	4
1.3.1. <i>Գոյություն ունեցող իրավիճակը</i>	<i>4</i>
1.3.2. <i>Նախատեսվող վերազինման միջոցառումները.....</i>	<i>6</i>
1.3.3. <i>Արտադրական գործընթացները, հումքը</i>	<i>6</i>
1.3.4. <i>Տեխնոլոգիական սարքավորումների բնութագրերը և տեխնիկական ցուցանիշները.....</i>	<i>7</i>
Աղյուսակ 1. 2. Օժանդակ սարքավորումներ.....	7
2. ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ	10
2.1. Տեղադիրքը և երկրաբանական պայմանները	10
2.2. Կլիմայական պայմանները	13
2.3. Հողեր.....	15
2.4. Մթնոլորտային օդ	16
2.5. Ջրային ռեսուրսներ	17
2.6. Բուսական աշխարհ.....	17
2.7. Կենդանական աշխարհ.....	18
2.8. Պատմամշակութային միջավայր	18
2.9. Բնության հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ.....	19
2.10. Սոցիալտնտեսական պայմանները	20
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	21
3.1. Ռիսկերի գնահատում	22
3.2. Արտանետումների աղբյուրները.....	23
3.3. Ջրօգտագործում և ջրահեռացում.....	23
3.4. Թափոններ.....	23
3.5. Սոցիալական ռիսկերը.....	23

3.6. Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	24
3.6.1. Մթնոլորտային օդ.....	24
3.6.2. Ջրային ռեսուրսներ	24
3.6.3. Թափոնների կառավարում.....	24
3.6.4. Կենսաբազմազանություն.....	24
3.6.5. Աշխատանքի անվտանգություն.....	25
3.6.6. Սոցիալական խնդիրներ	25
3.7. Փոխհատուցում	25

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Ձեռնարկողի վերաբերյալ տեղեկություններ

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Քարակերտի քարածուլման գործարան» բաց բաժնետիրական ընկերությունը: Հորձունեության հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, 1004, Լեռնագոգ համայնք:

1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Նախատեսվող գործունեության անվանումն է. “ՀՀ Արմավիրի մարզի Լեռնագոգի քարածուլման գործարանի վերակառուցման/վերազինում, պողպատե ձուլակտորների և ամրանների արտադրության կազմակերպում”:

Նախատեսվող գործունեության նպատակն է վերակառուցելով և վերազինելով Լեռնագոգ համայնքում առկա գործարանը հիմնել ժամանակակից բարձր արդյունավետության պողպատաձուլական գործարան:

1.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1. 3. 1. Գոյություն ունեցող իրավիճակը


Ներկայում Լեռնագոգ համայնքում գոյություն ունի Kara Kerdi jelman Gurjaran քարածուլման գործարանը: Չնայած գործարանի նավանմանը, այնտեղ իրականացվում էր պողպատի ձուլում: Գործարանում տեղադրված է պողպատի /սև մետաղ/ ջարդոնի հալման 2 վառարան, իրենց կաղապարման հանգույցներով, որոնց տարեկան արտադրական հզորությունը կազմում էր 25 հազար տ պողպատյա ձուլակտորներ:

Արտադրական գործընթացները իրականացվում էին հիմնական մասնաշենքում, որից դուրս տեղադրված է գազամաքրման համակարգ: Ներկայում գործարանը չի շահագործվում:

Արտադրական տարածքում առկա են բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները՝ գազամատակարարման, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և կոյուղու խողովակաշարեր:

Գործարանի տարածքը հանդիսանում է «Քարակերտի քարածուլման գործարան» ԲԲԸ սեփականությունը:

ՀՈՂԱՍՏԱԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ



Հարկերի համար (հարկ)	Երկարություն (մ)	Մասնակից սեփականություն
1-2	217.50	ապարք սրահ
2-3	50.00	---
2-4	22.50	---
4-5	62.00	---
5-6	101.50	---
5-7	62.80	---
7-8	21.00	շեշտ
8-9	37.00	գեղար
7-10	280.00	ապարք սրահ
10-11	134.80	---
11-12	16.60	---
13-13	21.00	---
13-14	5.60	---
14-15	338.1	---
15-1	182.80	---

Բն. համար	Ընկ. սեփականություն
1	գրասենյակ
2	գրասենյակ
3	
4	պահարան
5	ձեռքբերման կայան
6	գլխարկապահարան
7	պահարան
8	կոմպոզիցիոն
9	սրահ
10	սրահ
11	հեղուկալից
12	գլխարկապահարան
13	սրահ
14	պահարան
Կատարող	
(ստորագրություն)	
15	
16	
17	
18	
19	

Հատակագիծը սեփականության վկայականից

1.3.2. Նախատեսվող վերագինման միջոցառումները

Ներկայում Իրանի Իսլամական Հանրապետության «Արաս Սթիլ» (ARAS STEEL) ընկերությունը նախատեսում է գնել «Քարակերտի քարածուխան գործարան» ընկերության բաժնետոմսերի 100 տոկոսը:

Ձեռնարկողը նախատեսում է ներմուծել նոր ժամանակակից ձուլման և գլանման սարքավորումներ և հիմնել սկզբնական շրջանում 24000 տ արտադրողականությամբ ձուլակտորների արտադրություն: Վառարանային հանգույցի նախատեսվող հզորությունը կազմում է 5 տ/ժամ: Կփոխարինվի խողովակների, փականների, օժանդակ կառույցների մեծ մասը:

Ներկայում գործող վառարանը կկանգնեցվի, կանջատվի տեխնոլոգիական սխեմայից և կօգտագործվի որպես պահեստային ջրի բաք:

Կտեղադրվեն նոր կառավարման համակարգեր, գազամաքրման սարքավորումներ:

1.3.3. Արտադրական գործընթացները, հումքը

Նախատեսվող գործունեության հիմնական հումքը կազմելու է սև մետաղների ջարդոնը: Կարող են նաև ներկրվել որոշակի քանակությամբ հումքատեսակներ արտերկրից:

Հումքը՝ մետաղի ջարդոնը ավտոտրանսպորտային միջոցներով կտեղափոխվի գործարանի տարածք և կպահեստավորվի գործարանի տարածքի բացօդյա մասերում:

Մետաղի հալման համար նախատեսվում տեղադրել մագնիսական ինդուկցիոն վառարան (ՄԻՎ):

Մետաղը սայլակներով կտեղափոխվի վառարանային տեղամաս և կբեռնվի վառարանի հնոց:

Վառարանի հնոցում ջերմաստիճանը պահպանվում է 1670°C մակարդակի վրա: Մետաղի որակը վերահսկելու համար վառարանից վերցվում է նմուշ և ստուգվում լաբորատորիայում: Նախատեսվում է ապահովել ՌԴ ԳՈՍՏ-երին համապատասխան մետաղի որակ:

Հալվածքը վառարանից հոսում է դեպի հալվածքի տեղափոխման վաք (լոտոկ), որը նախապես տաքացվում է մինչև 1200°C, և լցվում ձուլման սարքի (Continuous Casting Machine) մեջ: Ձուլման սարքի ելքը միացված կաղապարների հետ, որոնցում ձևավորվում է ձուլակտորը, կամ հալվածքի հոսքագծի հետ, որի կտրվածքը և վաքի երկարությունը կարգաբերվում են ըստ պատվիրատուի առաջադրանքի:

Ձուլակտորները և այլ ձուլվածքները /ամրան, տավրիկ և այլ/ շորժվում են հովացնող վաքով և տեղափոխվում պահեստ: Հովացում կատարվում է շրճանառու ջրի միջոցով:

1. 3. 4. Տեխնոլոգիական սարքավորումների բնութագրերը և տեխնիկական ցուցանիշները


Աղյուսակ 1. 1. Հալման հանգույցի սարքերը և ցուցանիշները

<i>N</i>	<i>Հանգույցի կամ սարքի անվանումը</i>	<i>Տեխնիկական բնութագրերը, մոդելը</i>	<i>Քանակը</i>
1	Ինդուկցիոն վառարան (Inductoheatm, Հնդկաստան)	Արտադրողականությունը՝ 5 տ, Էլ. հզորությունը՝ 2250 կՎտ	1
2	Էլ. սնուցիչ	2250 կՎտ/500 հց, 50 հց,	1
3	ԴԱԼ տիգելներ	Inlet/outlet	2
4	Ջրի շրջանառու համակարգ /պոմպ, ցանց, բաք/	MFP	1
5	Կառավարման վահանակ	-	1
6	Հիդրավլիկ փական	-	1
7	Ձուլման սարքի (Continuous Casting Machine)	R 6000, SQ 100 – 200 mm, L = 12m, 5 t	1

Աղյուսակ 1. 2. Օժանդակ սարքավորումներ

<i>N</i>	<i>Հանգույցի կամ սարքի անվանումը</i>	<i>Տեխնիկական բնութագրերը, մոդելը</i>	<i>Քանակը</i>
1	Տրանսֆորմատոր	Հզորությունը՝ 2600 կՎ, առաջնայն լարում՝ 10. 000, երկրորդային լարում՝ 575v	1
2	Պղնձյա հաղորդաթիթեղ	-	1
3	Կաղապարի ծածկ	-	1
4	Վիբրատոր	-	1
5	Ռոլեր	-	3
6	Գազամաքրման կայանք	Զտման պարկեր (polyester) 500 – 550 գ/մ ³ – 320 հատ	1
7	Օդամղիչ	Shayan Sannat	1
8	Ցիկլոն	Տե37	Կորոզվի նախագծման փուլում

Ստորև ներկայացված է գործարանի հատակագիծը:



Արտադրական մասնաշենքի հատակագիծը

1. 3. 5. Օգտագործվող նյութերը և բնառեսուրսները

Պողպատաձուլման ընթացքում օգտագործվելու են խարամագոյացման նյութեր՝ կիր և շպատ: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ վառարանի հովացման, ինչպես նաև անձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար:

Գործարանը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին: Ջուրը խմելու որակի է: Հաշվի առնելով, որ տեխնիկական նպատակներով ջուրը օգտագործվելու է միայն շրջանառու հովացման համակարգի կորուստների լրացման համար, օգտագործվելու է խմելու որակի ջուր:

Քանի որ, հովացման համակարգը փակ շրջանառու է, արտադրական արտահոսք չի առաջանում:

Կենցաղային կեղտաջրերը գործող կոյուղու ներքին ցանցի միջոցով միացված են արտադրական գոտու կոյուղատարին:

Նյութերի և ջրի ստույգ քանակները կհաշվարկվեն ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

2.1. Տեղադիրքը և երկրաբանական պայմանները

«Քարակերտի քարաձուլման գործարան» ԲԲԸ գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Լեռնագոգ համայնքի տարածքում:

Գործարանի տարածքի մոտակա բնակավայրերը Լեռնագոգ և Դալարիկ գյուղերն են: Հեռավորությունը Լեռնագոգի մոտակա բնակելի տնից կազմում է 1006 մ, Դալարիկի՝ 803 մ:

Գործարանի մերձակայքում գործում են միայն այլ արտադրական կազմակերպություններ, այդ թվում Լեռնագոգի քարամշակման հործարանը:

Գործարանի անմիջական հարևանությամբ ամցնում են Դալարիկ – Քարակերտ միջմայանքային H 17 մայրուղին և Դալարիկ – Լեռնագոգ միջհամայնքային ճանապարհը:

Գործարանի արտադրական շինություններից 170 և 260 մ հեռավորության վրա անցնում է Մաստարա Սելավ գետը (ջրանցքը), որը մերձակա գյուղերը օգտագործում են ոռոգման համար:

Լեռնագոգի տարածաշրջանի երկրկետևի արտաքին շերտի կառուցվածքի վրա որոշիչ ազդեցություն է ունեցել Արագած բազմաձին /պոլիգեն/ հրաբուխը: Տարածքը գտնվում է Արագածի պլեոցենի-էպոպլեյստոցենի հրաբխային լավաների հոսքերի /բազալտային անդեզիտներ, անդեզիտներ, դացիտներ, 3.0-0.85 մլն. տարի/ և վերին պլիոցեն-պլեյստոցենի և ժամանակակից գետալճային, հեղեղատային, լանջային նստվածքների /գլաքարեր, ավազներ, ավազահողեր, կավեր, 3.3 – 0.01 մլն տարի/ սահմանագծին: Հյուսիս-արևմուտքից տարածաշրջանին հարակից են էպոպլեյստոցենի տարատեսակ /Երևանի, Անիի, Արթիկի, Բյուրականի/ տուֆային լավաների շերտերը /1.78-0.85 մլն. տարի/Արևմուտքից և հյուսիս–արևմուտքից ջրամբարի տարածաշրջանը սահմանափակվում է միջին-վերին նեոպլեյստոցենային լավաները և լավային ծածկոցները, կազմված բազալտներից, բազալտային անդեզիտներից, անդեզիտներից, դացիտներից, տրախիանդեզիտներից, բազանիտներից:

Տարածաշրջանին բնորոշ է նորագույն հրաբխականությունը: Արևմուտքից և արևելքից տարածաշրջանը շրջապատված է բազմաթիվ փոքր միաձին հրաբուխներով, հիմնականում շլաքային կոներով:



Տեղանքի իրադրային սխեման

Տարածքի սեյսմատեկտոնական պայմանները

ՀՀ գտնվում է ակտիվ երկրաշարժային գոտում: Հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ սեյսմիկ զոնաները. Մերձքուռյան, Սոմխեթա-Ղարաբաղի, Մերձսևանյան, Կասպան-Գոգորանի, Ծաղկունյաց-Զանգեզուրի, Երևան-Օրդուբադի, Ուրծ-Վայքի: Հիմնականում նշված զոնաների սահմաններով է անցնում երկրկեղևի խորքային բեկվածքները, որոնցից ամենախոշորն են Սևան-Աքերայի, Շիրակ –Զանգեզուրի և Միջին Արաքսյան /Երևանյան/ բեկվածքները: Բեկվածքների այս զոնաները թափանցում են երկրկեղևի 40-50 կիլոմետր խորություններ, իսկ երկրկեղևի մակերեսին արտահայտվում են 5-10 կմ լայնություն ունեցող գոտիներով:

Ըստ ՀՀ Ազգային Ատլասի տվյալների Լեռնագոգի տարածքը գտնվում է երկու գոտիների շրջանում՝ երկրաշարժների հնարավոր ուժգնությունը (Ո)՝ 8 – 9, գետնի առավելագույն հորիզոնական արագացումները՝ 0.2 – 0.3 և երկրաշարժների հնարավոր ուժգնությունը (Ո)՝ 8 – 9, գետնի առավելագույն հորիզոնական արագացումները՝ 0. 1 – 0. 3:

2.2. Կլիմայական պայմանները

Լեռնագոգի տարածաշրջանի կլիմայի ձևավորման հիմնական գործոններից են հանդիսանում տվյալ տարածքի ճառագայթային ռեժիմը, տարածքի ռելիեֆի ձևերը, տեղանքի բարձրությունը, աշխարհագրական լայնությունը, ցերեկվա և գիշերվա տևողությունը, գործույնյա մակերևույթի բնույթը և այլն:

Տարածքի կլիմայական պայմանները շոգ և չորային են: Չոր խիստ ցամաքային կլիման բնորոշ է ցածրադիր՝ մինչև 1000մ շրջաններին, իսկ չոր ցամաքային կլիման, ցուրտ ձմեռներով ձևավորվում է 1000-1300մ բարձրությունների վրա:

Ըստ Քարակերտի օդերևութաբանական կայանի օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 11°C: Օդի միջին առավելագույն ջերմաստիճանը Քարակերտում կազմում է 31.7°C, նվազագույնը՝ հունվարին 0.4°C, իսկ օդի միջին նվազագույն ջերմաստիճանը համապատասխանաբար կազմում է հուլիսին՝ 17.9°C, հունվարին՝ -7.8°C:

Ստորև բերված են տեղանքի հիմնական օդերևութաբանական ցուցանիշներն ըստ Քարակերտի օդերևութաբանական կայանի տվյալների:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերևութաբանական կայանը	Բարձրությունը ծ. մ-ից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Քարակերտ	1085	-4.2	-2.6	3.7	11.1	16.1	20.4	24.7	24.5	19.9	13.4	5.8	-0.9	11	-28	40

Աղյուսակ 2.2 Օդի հարաբերական խոնավությունը

Օդերևութաբանական կայանը	Բարձրությունը ծ. մ-ից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Քարակերտ	1085	71	64	61	57	52	50	45	43	46	54	66	72	57	-	-

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Ձնածածկույթը, մմ	
	Ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը, մմ	Տարվա ձնածածկույթի օրերը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Քարակերտ	13	13	23	37	47	31	19	10	13	25	17	16	270	39	46
	17	12	18	30	45	30	25	22	40	41	13	17	45		

2.3. Հողեր

Արմավիրի մարզի հիմնական հողային տիպերն են *ռոռգելի մարգագետնային գորշ, կիսանապատային գորշ և հիդրոմորֆ աղուտ-ալկալի հողերը*: Տեղ-տեղ առկա են նաև մայրական ապարների ելքերը:

Ռոռգելի մարգագետնային գորշ հողեր

Ռոռգելի մարգագետնային գորշ հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրի 800-950 մ բարձրության տարածքում, ինչպես մարդու դարավոր գործունեության, այնպես էլ գրունտային ու մակերեսային խոնավացման ռեժիմների համատեղ ներգործության պայմաններում Այս տիպի հողերի ընդհանուր տարածքը Արմավիրի մարզում կազմում է 23604 հա: Այդ հողերի համար բնորոշ է հորիզոնների թույլ տարանջատումը, պրոֆիլի զգալի հզորությունը (80-120 սմ), թույլ հումուսայնությունը (1.5-2.0 %), կարբոնատայնությունը (3-7%), հիմնային ռեակցիան (pH 8.2-8.5), միջին կլանման ծավալը (30-40 մգ.էկվ/100 գ) և բավարար ֆիզիկական հատկությունները: Հողերը գտնվում են ինտենսիվ երկրագործության տարածքում, որտեղ շարունակաբար կիրառվող ագրոտեխնիկական միջոցառումները նպաստում են հողերի ջրաֆիզիկական հատկությունների բարելավմանը և դրանց բերրիության բարձրացմանը:

Կիսանապատային գորշ հողեր

Արմավիրի մարզում կիսանապատային գորշ հողերի տարածքը կազմում է 16 060 հա: Այդ հողերի համար բնորոշ է հորիզոնների թույլ տարանջատումը, հումուսային հորիզոնների փոքր հզորությունը (25-40 սմ), պրոֆիլի թույլ հումուսայնությունը (1.5-2.0 %), բարձր կարբոնատայնությունը (6-30%), հիմնային ռեակցիան (pH 7.8-8.3), միջին կլանման ծավալը (20-30 մգ.էկվ/100 գ) և փոշիացած ստրուկտուրայնությունը: Գրունտային ջրերը գտնվում են բավականաչափ մեծ խորությունների վրա և հողակազմական գործընթացների վրա էական ազդեցություն չունեն: Այս հողերն ալկալիացված չեն, իսկ որոշ տարածքների աղակալման պատճառը հողառաջացման ապարներն են և գիպսային հորիզոնները: Աղակալումը հիմնականում ունի սուլֆատային բնույթ, որը ուժեղ բացասական ազդեցություն չի թողնում գյուղատնտեսական մշակաբույսերի բերրիության վրա: Կիսանապատային գորշ հողերը հարուստ են կալիումով՝ 45-67 մգ/100գ, ֆոսֆորով՝ 3,7-4,2 մգ/100գ և աղքատ են ազոտով՝ 1,4-2,1 մգ/100գ: Այս հողերի երկարատև մշակման և ռոռգման պայմաններում, ինչը բնորոշ է ներկայացված համայնքներին, տեղի է ունենում վերին շերտերի կարբոնատների լվացում, որը նպաստում է հողի ջրաֆիզիկական հատկությունների լավացմանը, հողաշերտի հզորացմանը, ավելանում է հումուսի պարունակությունը, հասնելով 2-2,5%-ի: Լվացվում են ներքին շերտերում առկա ջրալույծ աղերը, վերանում են հողի պրոֆիլում ցեմենտացված շերտերը, ինչպես նաև մակերսային շերտի

կեղևակալումը: Հողերը ձեռք են բերում բերրիության բարձր մակարդակ, ինչը նպաստում է բերքատվության բարձրացմանը: Երկարատև կուլտուրականացման արդյունքում, այս հողերի բերրիության մակարդակը չի գիջում ոռոգելի մարգագետնային գորշ հողերին:

Հիդրոմորֆ աղուտ-ալկալի հողերը

Այս հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրի այն հատվածներում, որտեղ գետնաջրերը հանքայնացված են և գտնվում են գետնի մակերեսից 1-2.5 մ խորության վրա: Դրանց ընդհանուր մակերեսն Արմավիրի մարզում կազմում է 9.15 հազ. հա: Գրունտային ջրերի սոդային բնույթի քիմիական կազմը բերել են աղուտ-ալկալիների ձևավորմանը, որոնք ունեն սոդային բնույթի աղակալում և տարբեր աստիճանի աղակալման և ալկալիացման աստիճան: Դրանք բնութագրվում են ուժեղ աղակալվածությամբ (1-3 %), կարբոնատների զգալի պարունակությամբ(10-16%), բարձր ալկալիացվածությամբ (25-80 %), որոնց յուրացումը կարող է իրականացվել միայն քիմիական մեխորացման ճանապարհով:

Չեզոք քլորիդա-սուլֆատային կամ սուլֆատա-քլորիդային աղուտներն ունեն սահմանափակ տարածման արեալ և գտնվում են թեթև մեխանիկական կազմ ունեցող տեղամասերում:

2.4. Մթնոլորտային օդ

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

ՊՈԱԿ-ը Լեռնագոգ համայնքում չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ ՊՈԱԿ-ի առաջարկված է համապատասխան ձեռնարկ-ուղեցույցի¹: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.2 մգ/մ³;
- Ծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³;

¹ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ. “ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները” ուղեցույց-ձեռնարկ: Երևան-2011

- Ագուտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

2.5. Ջրային ռեսուրսներ

Արմավիրի տարածքի բոլոր գետերը համարվում են Արաքս գետի ձախ վտակները: Տարածաշրջանի հիմնական ջրային ռեսուրս է հանդիսանում Ախուրյան գետը: Գետի ընդհանուր երկարությունը 186 կմ է: Գետի անկումը հանրապետության տարածքում 1067 մ է:

Ախուրյան գետի ջրավազանը տալիս է միջին տարեկան 263 մ³/վրկ ջուր: Այս ջրերի մի մասը կորչում են ճանապարհին ներծծվելով ապարների մեջ: Ներկայումս, Ախուրյան ջրամբարի կառուցումից հետո Ախուրյան գետի հոսքը կարգավորված է: Ախուրյան գետի ջրերն օգտագործվում են միջպետական պայմանագրով հավասար չափով: Ախուրյան գետի համակարգի մասն են կազմում Շիրակի և Թալինի ջրանցքները:

Անմիջապես Լեռնագոգի շրջանի հիմնական ռեսուրսը Մաստարայի Սելավ գետն է, որը գտնվում է Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի Մեծամոր գետի գետավազանում: Մեծամորի գետավազանն ընդգրկում է Մեծամոր գետի մակերևութային (վերերկրյա) ջրհավաք ավազանի (առանց Քասախ վտակի) մակերեսը՝ 480 կմ², Սելավ-Մաստարա ջրհավաք ավազանի մակերեսը՝ 1580 կմ² և Ախուրյանի ու Մեծամորի գետաբերանների միջև ընկած Արաքս գետի ձախափնյա (Հայաստանի Հանրապետության սահմաններում) անհոսք ավազանի մակերեսը՝ 180 կմ²) /Աղբյուրը ՀՀ կառ. 29 05 2008 N549-Ն որոշման հավելված 5-ից/:

2.6. Բուսական աշխարհ

Լեռնագոգի տարածքը գտնվում է Կովկասյան բուսական նահանգի Երևանի ֆլորիստիկ շրջանում: Երևանի ֆլորիստիկ շրջանը գրավում է Երևան քաղաքը շրջակայքով, ամբողջությամբ Արմավիրի և Արարատի մարզերը, մասամբ Կոտայքի մարզը: Երևանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ է համեմատաբար ցածրադիր ուղղաձիգ գոտիականության գոտիները: Ֆլորիստիկ շրջանի բարձրունքային միջակայքը ծ. մ. 700 - 1700 մ է: Այստեղ կան կիսանապատային, աղուտացված ճահիճների, անապատային, տափաստանային բուսական համակեցություններ և գիհու նոսրանտառներ: Երևանի ֆլորիստիկ շրջանում հայտնաբերված է 1920 տեսակի բարձրակարգ բույսեր /երկրորդը Ջանգեզուրի ֆլորիստիկ շրջանից հետո/, որից 46-ը *էնդեմիկ* է, 144 տեսակ /ֆլորիստիկ շրջաններում՝ ամենաբազմաքանակը/ գրանցված է ՀՀ բույսերի Կարմիր գրքում:

Լեռնագոգի տարածաշրջանը *վերընթաց լանդշաֆտային գոտիներից* հիմնականում զբաղեցնում է *Կիսանապատային լեռնահարթավայրային /500-1000 մ/ և*

Չոր տափաստանային՝ ցածր լեռնային /1000-1600 մ/ գոտիները, որոնք տեղ-տեղ ներթափոնցում են իրար մեջ: Բուսական համակեցությունների տեսակներն են.

ա/Կիսաանապատային բուսականություն

Օշինդրա- էֆեմերային, մասնակցությամբ՝ *Artemisia fragrans* Willd., *Kochia prostrata* (L.) Schrad., *Capparis spinosa* Willd., *Ceratoides papposa* Botsch. et Ikonn., *Atraphaxis spinosa* L., *Rhamnus pallasii* Fisch. et Mey., *Tanacetum argyrophyllum* (C. Koch) Tzvel., *Poa bulbosa* L. *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*, *Aeluropus littoralis* (Gouan) Parl.

բ/ Անապատային բուսականություն

Հալոֆիլ, մասնակցությամբ՝ *Salsola ericoides* Bieb., *S. dendroides* Pall., *S. nitraria* Pall., *Halocnemum strobilaceum* (Pall.) Bieb.

Անմիջապես գործարանի տարածքում և դրա շրջակայքում բուսականությունը գործնականում բացակայում է: Այստեղ առանձին հատվածում առկա են նոսր խոտածածկ հողակտորներ: Հազվադեպ հանդիպող կամ Կարմիր քրում գրանցված բուսատեսակներ չկան:

2.7. Կենդանական աշխարհ

Լեռնագոգի տարածաշրջանը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզում, Մյասնիկյան և Դալարիկ համայնքների միջև ընկած կիսաանապատային գոտում: Տեղանքը իրենից ներկայացնում է անտառազուրկ տարածք, որին բնորոշ է *չոր խիստ ցամաքային* կլիմայական պայմաններ:

Հայաստանի կիսաանապատային էկոհամակարգերում գրանցված է ողնաշարավոր կենդանիների 101 տեսակ (երկկենցաղների՝ 4, սողունների՝ 30, թռչունների՝ 23, կաթնասունների 44) և անողնաշար կենդանիների 1687 (այդ թվում՝ փափկամարմինների 59, սարդակերպերի 97, միջատների 1531): Հայաստանում տարածված 51 տեսակի սողուններից շատերը հանդիպում են Արարատյան դաշտում, այդ թվում՝ Արմավիրի մարզում:

Վերլուծության են ենթարկվել Արմավիրի մարզի ուսումնասիրվող տարածքի կենդանական աշխարհի վերաբերյալ գոյություն ունեցող գրական տվյալները:

2.8. Պատմամշակութային միջավայր

Արմավիրի մարզը հարուստ է պատմության և մշակույթի հուշարձաններով: Այդ հուշարձանները ներկայացնում են տարածաշրջանում հայտնի աշխարհիկ և հոգևոր գործառնություն ունեցող հուշարձանների բոլոր տեսակները: Դրանք են հնագույն

բնակատեղիներ, քարեդարյան կացարաններ, միջնադարյան գյուղատեղիներ, պաշտպանական, հոգևոր, տնտեսական կառույցներ, գերեզմանոցներ, կոթողներ և խաչքարեր և այլն: Ժամանակագրական առումով նրանք ընդգրկում են վաղնջական ժամանակներից մինչև մեր ժամանակները:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ Լեռնագոգի գործարանի մերձակա տարածքներում պատմամշակութային հուշարձաններ չեն հայտնաբերվել

2.9. Բնության հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ

Լեռնագոգ համայնքի անմիջական մոտակայքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ: Մոտակա՝ «Որդան կարմիր» պետական արգելավայրը գտնվում է մոտավորապես 30 կմ հեռավորության վրա:

«Որդան կարմիր» պետական արգելավայրը ստեղծվել է 1987 թ.: Գտնվում է Արարատյան դաշտում՝ Մեծամորի ավազանում: Նրա տարածքն ընդգրկում է աղուտային էկոհամակարգերի մի փոքր տեղամաս՝ 219.85 հա մակերեսով, ծովի մակերևույթից 835-850 մ բարձրության վրա:

Արգելավայրի գործունեության հիմնական նպատակն է ապահովել Արարատյան դաշտի հալոֆիտ (աղուտային) ցուցանմուշային էկոհամակարգերը: Արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտը Հայաստանի էնդեմիկ արժեքավոր միջատն է՝ որդան կարմիրը, որն ապրում է որդանախոտ և եղեգն բույսերի վրա: Արգելավայրն Արարատյան դաշտի գրեթե անհետացած աղուտային համակեցությունների

Բնության հուշարձաններ

ՀՀ կառավարության 2008 թ. օգոստոսի 14-ի թիվ 967-Ն «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքում գտնվող բնության հուշարձանների ցանկը: Ցանկում ընդգրկված է 232 գտնվող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական և կենսաբանական բնության հուշարձաններ:

Բնության հուշարձանը գիտական, պատմամշակութային և գեղագիտական առանձնահատուկ արժեք ներկայացնող բնական օբյեկտ է, որի պահպանության ռեժիմը սահմանվում է ՀՀ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 19-րդ հոդվածի պահանջներով:

Լեռնագոգի պողպատաձուլական գործարանի մերձակա տարածքում չկա ՀՀ կառավարության «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» 14 08 2008 թ. N 967-Ն որոշմամբ հաստատված *բնության հուշարձան*:

2.10. Սոցիալտնտեսական պայմանները

Նախատեսվող գործունեությունը կիրականացվի ՀՀ Արմավիրի մարզի Լեռնագոգ համայնքի տարածքում: Լեռնագոգը համայնքը հիմնվել է 1978թ: Այն սահմանակից է Դալարիկ, Քարակերտ, Մյասնիկյան, Լուսակն համայնքներին:

Համայնքի մակերեսը - 2297.9 հա

Հեռավորությունը մայրաքաղաքից - 65կմ

Բնակչության թիվը – 2341

Բնակչության կազմը - հայեր

Տնային տնտեսությունների թիվը - 617

Օգտակար հանածոներ - խարամ, բազալտ

Կրթական հաստատություններ - <<Օնիկ Փակումեանի անվան>> միջնակարգ դպրոց

Մշակութային հաստատություններ - չկան

Մարզական հաստատություններ - չկան

Արտադրական ձեռնարկություններ – Հացամթերքների կոմբինատ

Բնակչության հիմնական զբաղմունքը – գյուղատնտեսություն, անասնապահություն, թռչնաբուծություն

Հոգևոր կառույցներ – չկան:

2.11. Սանիտարապաշտպանիչ գոտի

Ըստ 245-71 սանիտարական նորմերի Լեռնագոգի պողպատե ձուլակտորների և ամրանների արտադրության գործարանի սանիտարա-պաշտպանիչ գոտին (ՄՊԳ) կկազմի 100 մ²: Հաշվի առնելով, որ մոտակա բնակելի թաղամասը գտնվում է ավելի քան 0.5 կմ հեռավորության վրա, հատուկ միջոցառումներ ՄՊԳ վերաբերյալ չեն նախատեսվել:

² Класс IV. Санитарно-защитная зона размером 100 м.

5. Предприятия металлообрабатывающей промышленности с чугунным, стальным (в количестве до 10000 т/год) и цветным (в количестве до 100 т/год) литьём.

3. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ և ՆԱԽԱԳԾՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
 2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
 3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
 4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
 5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
 6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ.),
 7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ.),
 8. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.)
 9. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.)
 10. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.)
- ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում
 - ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում
 - ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում
 - ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում
 - «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը
 - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական

շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”

- Հայաստանի Հանրապետության **առողջապահության նախարարարի** 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթուման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”

- <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 30.06.2003թ-ի N 121-Ն որոշում:

Համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված դասակարգումների, նախատեսվող գործունեությունը դասվում է <<Ա>> կատեգորիայի և ենթակա է փորձաքննության՝ երկու փուլով:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

4.1. Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- Պողպատի թափոնների ընդունման, պահեստավորման և բեռնման աշխատանքների հետ,

- Պողպատի հալման, ձուլման և արտադրատեսակների պատրաստման հետ:

Գործունեությունը իրականացվում է գոյություն ունեցող շինություններում և օգտագործվելու են գոյություն ունեցող ենթակառուցվածքները:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

4.2. Արտանետումների աղբյուրները

Ինչպես ներկայում գործող, այնպես էլ վերակառուցված ձուլարանում արտանետման աղբյուրն են հանդիսանում պողպատի ձուլման վառարանները, իրենց կադապարման հանգույցներով:

Այդ աղբյուրներից արտանետվում են .

- անօրգանական փոշի /կախված մասնիկներ/,
- ածխածնի օքսիդ,
- ազոտի երկօքսիդ,

Վերազինման արդյունքում առաջացող արտանետումների ստույգ ցանկը և քանակները կհաշվարկվեն ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում:

4.3. Ջրօգտագործում և ջրահեռացում

Գործարանի ջրամատակարարումը իրականացվում է Վեոլիա ջուր ընկերության ցանցերից, գոյություն ունեցող միացումների միջոցով:

Ջուրը օգտագործվում է՝

- արտադրական նպատակներով՝ հոսքագծերի հովացման համար,
- կենցաղային նպատակով՝ անձնակազմի խմելու և տնտեսական նպատակներով:

Կոյուղաջրերը գործող կոյուղու ներքին ցանցի միջոցով հոսում են արտադրական գոտու կոյուղատարին:

Վերազինման արդյունքում նախատեսվող ջրօգտագործման և ջրահեռացման ծավալները կհաշվարկվեն ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում:

4.4. Թափոններ

Ներկայում գործարանում առաջանում են վառարանների խարամ և գոծիչներում որսված փոշի: Վերակառուցումից հետո կառաջանան նույն թափոնները, որոնց ստույգ քանակները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվությունում:

4.5. Սոցիալական ռիսկերը

Գործարանը գտնվում է արտադրական գոտում, բնակելի թաղամասերից զգալի հեռավորության վրա և շահագործումը չի ունենա շոշափելի ազդեցություն բնակչության առողջության կամ կենսակերպի վրա:

4.6. Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

Սույն ենթաբաժնում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները, ըստ ազդեցության ուղղությունների:

4.6.1. Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- արտադրական մասնաշենքը կապահովվի օդափախության համակարգով,
- հալման վառարանները կկահավորվեն օդաքարշ համակարգով,
- բոլոր արտանետումները կհավաքվեն մեկ խողովակի մեջ և կմաքրվեն գազամաքրման համակարգում:

Նախատեսվում է իրականացնել արտանետումների մոնիթորինգ:

4.6.2. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- հովացման գործընթացը իրականացվելու է շրջանառու համակարգի միջոցով,
- արտադրական արտահոսքը հավաքվելու է ավազաններում, որտեղ իրականացվելու է կախված մասնիկների նստեցում և յուղային մասի անջատում
- մաքրվելով ավազանում շրջանառու ջրերը վերադարձվելու են հովացման համակարգ:

Վթարային դեպքերի և հակահրդեհային իրավիճակների համար նախատեսված են ջրի պահեստային տարողություններ:

4.6.3. Թափոնների կառավարում

Բոլոր տեսակի թափոններ հավաքումը, ժամանակավոր պահեստավորումը և հետագա օգտագործումը կամ այլ լիցենզավորված կազմակերպություններին տրամադրումը կկատարվի ըստ նախորոք մշակված և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ համաձայնեցված թափոնների անձնագրերի:

4.6.4. Կենսաբազմազանություն

Տարածքը գտնվում է արտադրական գոտում, որտեղ չկան վայրի կենդանիների ապրելավայրեր և բնական բուսականություն:

4.6.5. Աշխատանքի անվտանգություն

Գործարանում առկա են աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների արձագանքման բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Աշխատանքի անվտանգության և հակահրդեհային պայմանները բազմիցս ստուգվել են ԱԻՆ ստորաբաժանումների և այլ տեսչությունների կողմից:

4.6.6. Սոցիալական խնդիրներ

Ինչպես վերը նշվել է գործարանի շահագործումը չի առաջացնի խնդիրներ մոտակա բնակելի թաղամասերի համար:

Միննույն ժամանակ գործարանի շահագործումը թույլ կտա 100 աշխատողների լուծել իրենց ընտանիքների սոցիալական խնդիրները:

4.7. Փոխհատուցում

Նախատեսվող բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Բնապահպանական միջոցառումների մանրամասն նկարագրությունը, կատարողների ցանկը և ծախսային ցուցանիշները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվության կազմում:

Աղյուսակ 3.2. Բնապահպանական և սոցիալական միջոցառումների համառոտ ծրագիր

<i>№</i>	<i>Արտադրական գործընթացը</i>	<i>Բնապահպանական կամ սոցիալական միջոցառում</i>	<i>Մոնիթորինգի եղանակ</i>
1	Թափոնների ընդունում	Մև մետաղի ջարդոնը պահեստավորել առանձին հարթակներում	Արտաքին զննում
2	Մետաղի ջարդոնի նախապատրաստում	Մետաղի ջարդոնի տեղափոխումը և բեռնումը իրականացնել մեխանիկական եղանակով՝ նվազագույնի հասնելով ձեռքի աշխատանքը	Արտաքին զննում
2	Հալում	ա/ Վառարանի կառավարումը իրականացնել ավտոմատ չափիչ հսկիչ սարքերով	Հսկիչ չափիչ սարքերի գրանցումների վերլուծություն

№	Արտադրական գործընթացը	Բնապահպանական կամ սոցիալական միջոցառում	Մոնիթորինգի եղանակ
		բ/ Ջերմաստիճանի ավտոմատ կարգավորում	
3	Հավվածքի ձուլում	Բոլոր հոսքագծերը պետք է ունենան օդաքարշ ծածկեր /զոնտ/	Արտաքին զննում
4	Հավվածքների և ձուլվածքի հովացում	Հովացումը իրականացնել շրջանառու համակարգով, բացառելու համար ջրի աղտոտումը նյութերի հետ չփման արդյունքում	Արտաքին զննում
5	Հալման և ձուլման գործընթացներ	Հետևել մարման համակարգի տեխնոլոգիական ցուցանիշների համապատասխանությանը ռեգլամենտային ցուցանիշներին	Տարածքում և մոտակա բնակելի թաղամասում օդի աղտոտվածության պարբերական ³ չափում, այդ թվում՝ NO ₂ , CO, ՊՄ /փոշի/
6	Աշխատանքի անվտանգություն	<p>ա/ արդիականացնել և ԱԻՆ մարմինների հետ համաձայնեցնել «Արտակարգ իրավիճակների պատրաստվածության» պլանը</p> <p>բ/ Սպասարկող անձնակազմի համար կազմակերպել բանեցրած անվադողերի պիրոլիզի կայանքի անվտանգ շահագործմանն ուղղված ուսուցողական դասընթացներ:</p> <p>գ/ Ապահովել վառարանները սպասարկող անձնակազմին անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներով:</p> <p>դ/Կահավորել հալման և ձուլման տեղամասերը անվտանգության</p>	<p>«Արտակարգ իրավիճակների պատրաստվածության» պլանի առկայություն</p> <p>Դասընթացների մատյանների առկայություն</p> <p>Միջոցների առկայություն</p> <p>Նշանների առկայություն</p>

³ Չափումների մեթոդիկան և պարբերականությունը կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվությունում

<i>№</i>	<i>Արտադրական գործընթացը</i>	<i>Բնապահպանական կամ սոցիալական միջոցառում</i>	<i>Մոնիթորինգի եղանակ</i>
		<p>նշաններով և ցուցադրական վահանակներով:</p> <p>ե/Ապահովել արտադրամասը՝ առաջնային հրդեհաշիջման միջոցներով և այլ հակահրդեհային հանդերձանքով:</p> <p>զ/ կազմակերպել գործարանի տարածքում անձնակազմի առաջին օգնության և բուժսպասարկման կետ</p>	<p>Միջոցների առկայություն</p> <p>Բուժկետի առկայություն</p>
	<p>Սոցիալական պարտավորություններ</p>	<p>ա/ հնարավորությունների սահմաններում Լեռնագոգի համայնքապետարանի հետ համաձայնեցված մասնակցել համայնքի սոցիալական ծրագրերին</p> <p>բ/ Ծանուցել մոտակա բնակելի թաղամասերի բնակիչներին բոլոր վթարային իրավիճակների մասին լրատվամիջոցների և համայնքապետարանի միջոցով</p>	<p>Արձանագրություն</p> <p>ծանուցման փաստաթղթերի առկայություն</p>



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2021-10-15

«ՔԱՐԱԿԵՐՏԻ ՔԱՐԱՁՈՒՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ»
Բաց բաժնետիրական ընկերություն (ԲԲԸ)

Գրանցման համար 57.130.00175

Հիմնադրման տարի 1998

Գրանցման ամսաթիվ 1998-04-20

Գործունեության ժամկետ Անժամկետ

Կարգավիճակ Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) 37411146

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 04602953

Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովագրի ծածկագիր) 9130175

Էլ. փոստ -

Կայք -

Գտնվելու վայրը

Հասցե 00 / Տ / – ԴԱԼԱՐԻԿ 1004 ԴԱԼԱՐԻԿ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռախոս 00

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն Տնօրեն

Անուն Ազգանուն ՄԱՍՈՒԴ ՄՈՀԱՐԱՄԻ ՄԱՀՄՈՒԴԱԼԻ

Անձնագրային տվյալներ R53773205 2021-05-10 ԱԱՈ

Հասցե ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. / Շ / 21 / 2/1 ԲՆ. ԱՐԱԲԿԻՐ 0014 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ